

ՊԱՏՎԱՍՏԱՆՅՈՒԹԵՐԻ ՄԱՍԻՆ ՏԵՂԵԿԱՏՎԱԿԱՆ ՀԱՅՏԱՐԱՐՈՒԹՅՈՒՆ

Ռոտավիրուսային պատվաստանյութ. Ինչ է պետք իմանալ

Many vaccine information statements are available in Armenian and other languages. See www.immunize.org/vis

Պատվաստանյութի մասին շատ հայտարարություններ հասանելի են հայերեն և այլ լեզուներով: Տե՛ս www.immunize.org/vis

1. Ինչու՞ պատվաստվել:

Ռոտավիրուսային պատվաստանյութը կարող է կանխել ռոտավիրուսային հիվանդությունը:

Ռոտավիրուսը սովորաբար առաջացնում է ծանր, ջրային լուծ, հիմնականում նորածինների և փոքր երեխաների մոտ: Ռոտավիրուսով հիվանդ երեխաների մոտ նաև տարածված է փսխումն ու ջերմությունը: Երեխաները կարող են ջրազրկվել և հոսպիտալացման կարիք ունենալ և նույնիսկ մահանալ:

2. Ռոտավիրուսային պատվաստանյութ

Ռոտավիրուսի դեմ պատվաստանյութը կատարվում է երեխայի բերանի մեջ կաթիլներ կաթացնելով: Երեխաները պետք է ստանան ռոտավիրուսային պատվաստանյութի 2 կամ 3 դեղաչափ՝ կախված օգտագործվող պատվաստանյութի ապրանքանիշից:

- Առաջին դեղաչափը պետք է ընդունվի մինչև 15 շաբաթական տարիքը:
- Վերջին դեղաչափը պետք է ընդունվի մինչև 8 ամսական տարիքը:

Գրեթե բոլոր երեխաները, ովքեր ստանում են ռոտավիրուսային պատվաստանյութ, պաշտպանված կլինեն ծանր ռոտավիրուսային փորլուծությունից:

Մեկ այլ վիրուս, որը կոչվում է «խոզի ցիրկովիրուս», կարելի է գտնել ռոտավիրուսային պատվաստանյութի մեկ ապրանքանիշում (Rotarix): Այս վիրուսը չի վարակում մարդկանց, և անվտանգության հայտնի ռիսկ չկա:

Ռոտավիրուսային պատվաստանյութը կարող է տրվել միաժամանակ այլ պատվաստանյութերի հետ:

3. Խոսքե՞ք ձեր բժշկի հետ

Տեղեկացրե՛ք ձեր պատվաստման մատակարարին, եթե պատվաստանյութ ստացողը.

- Ունեցել է **ալերգիկ ռեակցիա ռոտավիրուսային պատվաստանյութի նախորդ դեղաչափերից հետո** կամ ունի որևէ **լուրջ, կյանքին սպառնացող ալերգիա**
- Ունի **թուլացած իմունային համակարգ**
- Ունի **ծանր համակցված իմունային անբավարարություն (SCID)**
- Ունեցել է աղիների խցանման մի տեսակ, որը կոչվում է **«ինվազումցիա»**

Որոշ դեպքերում ձեր բժիշկը կարող է որոշել հետաձգել ռոտավիրուսային պատվաստումը մինչև հետագա այցելություն:

Թեթև հիվանդություններ, օրինակ՝ մրսածություն, ունեցող նորածինները կարող են պատվաստվել: Այն նորածինները, ովքեր միջին ծանրության կամ ծանր հիվանդ են, սովորաբար պետք է սպասեն մինչև ապաքինվեն, նախքան ռոտավիրուսային պատվաստանյութ ստանալը:

Ձեր երեխայի բժիշկը կարող է ձեզ լրացուցիչ տեղեկություններ տալ:

4. Պատվաստանյութի հանդեպ ռեակցիայի ռիսկերը

- Ռոտավիրուսային պատվաստանյութից հետո կարող է առաջանալ դյուրագրգռություն կամ թեթև, ժամանակավոր փորլուծություն կամ փսխում:

Ինվազումցիան աղիների խցանման տեսակ է, որը բուժվում է հիվանդանոցում և կարող է վիրահատության կարիք առաջացնել: Միացյալ Նահանգներում ամեն տարի դա բնականոն կերպով տեղի է ունենում որոշ նորածինների մոտ, և սովորաբար դրա համար հայտնի պատճառ չկա: Կա նաև ռոտավիրուսային պատվաստումներից ինվազումցիայի փոքր վտանգ, սովորաբար պատվաստանյութի առաջին կամ երկրորդ դեղաչափից հետո մեկ շաբաթվա ընթացքում: Ենթադրվում է, որ այս լրացուցիչ ռիսկը



U.S. Department of Health and Human Services
Centers for Disease Control and Prevention

տատանվում է ԱՄՆ-ի 20,000 նորածիններից 1-ից մինչև ռոտավիրուսային պատվաստանյութ ստացող ԱՄՆ-ի 100,000 նորածիններից 1-ի մոտ: Ձեր բժիշկը կարող է ձեզ լրացուցիչ տեղեկություններ տալ:

Ինչպես ցանկացած դեղամիջոցի դեպքում, շատ քիչ հավանականություն կա, որ պատվաստանյութը ևս լուրջ ալերգիկ ռեակցիա, այլ լուրջ վնասվածքներ կամ մահ կարող է առաջացնել:

5. Ի՞նչ կլինի, եթե լուրջ խնդիր կա:

Ինվազումցիայի նշաններն են ստամոքսի ցավը՝ ուժեղ լացի հետ մեկտեղ: Սկզբում այս դրվագները կարող են տևել ընդամենը մի քանի րոպե և մեկ ժամվա ընթացքում մի քանի անգամ ի հայտ գալ և անհետանալ: Երեխաները կարող են իրենց ոտքերը բարձրացնել դեպի կրծքավանդակ: Ձեր երեխան կարող է նաև մի քանի անգամ փսխել կամ կղանքի մեջ արյուն ունենալ, կամ կարող է թույլ կամ շատ դյուրազրգիռ լինել: Այս նշանները սովորաբար տեղի են ունենում ռոտավիրուսային պատվաստանյութի առաջին կամ երկրորդ դեղաչափից հետո առաջին շաբաթվա ընթացքում, բայց դրանք կարող են առաջանալ պատվաստումից հետո ցանկացած ժամանակ: Եթե կարծում եք, որ ձեր երեխայի մոտ ինվազումցիա է սկսվում, անմիջապես դիմեք բժշկին: Եթե չեք կարողանում կապ հաստատել ձեր բժշկի հետ, երեխային տարեք հիվանդանոց: Ասացեք նրանց, թե երբ է ձեր երեխան ստացել ռոտավիրուսի դեմ պատվաստանյութը:

Ալերգիկ ռեակցիա կարող է առաջանալ պատվաստված անձի՝ կլինիկայից հեռանալուց հետո: Եթե դուք տեսնում եք ծանր ալերգիկ ռեակցիայի նշաններ (ցան, դեմքի և կոկորդի այտուց, շնչառության դժվարություն, արագ սրտխփոց, գլխապտույտ կամ թուլություն), զանգահարեք **9-1-1** և մարդուն տեղափոխեք մոտակա հիվանդանոց:

Ձեզ մտահոգող այլ նշանների դեպքում զանգահարեք ձեր բժշկին:

Անբարենպաստ ռեակցիաների մասին պետք է հաղորդել Պատվաստանյութի անբարենպաստ իրադարձությունների հաղորդման համակարգին (VAERS): Ձեր բժիշկը սովորաբար կներկայացնի այս գեկույցը, կամ դուք կարող եք դա անել ինքներդ: Այցելեք VAERS-ի կայք www.vaers.hhs.gov կամ

զանգահարեք **1-800-822-7967** հեռախոսահամարով: VAERS-ը նախատեսված է միայն ռեակցիաների մասին հաղորդելու համար, և VAERS-ի անձնակազմի անդամները բժշկական խորհրդատվություն չեն տալիս:

6. Պատվաստանյութի արդյունքում վնասվածքների փոխհատուցման ազգային ծրագիր

Պատվաստանյութի արդյունքում վնասվածքների փոխհատուցման ազգային ծրագիրը (VICP) դաշնային ծրագիր է, որը ստեղծվել է փոխհատուցելու այն մարդկանց, ովքեր կարող են վնասվածքներ ստանալ որոշակի պատվաստանյութերից: Պատվաստման հետևանքով ենթադրյալ վնասվածքի կամ մահվան վերաբերյալ հայցերի ներկայացման ժամկետը կարող է լինել երկու տարի: Այցելեք VICP-ի կայք www.hrsa.gov/vaccinecompensation կամ զանգահարեք **1-800-338-2382** հեռախոսահամարով ծրագրի և հայց ներկայացնելու մասին տեղեկե՛նալու համար:

7. Ինչպե՞ս կարող եմ ավելին իմանալ:

- Զարգրեք ձեր բժշկին:
- Չանգահարեք ձեր տեղական կամ նահանգային առողջապահության բաժին:
- Պատվաստանյութերի փաթեթի ներդիրների և լրացուցիչ տեղեկությունների համար այցելեք Սննդամթերքի և դեղերի վարչության (FDA) կայքը՝ www.fda.gov/vaccines-blood-biologics/vaccines:
- Կապ հաստատեք Զիվանդությունների վերահսկման և կանխարգելման կենտրոնների (CDC) հետ:
 - Չանգահարեք **1-800-232-4636 (1-800-CDC-INFO)** կամ
 - Այցելեք CDC-ի կայք www.cdc.gov/vaccines:

Armenian translation provided by California Department of Public Health, Immunization Program



Բժշկական խնամք ապահովող(ներ)ին թույլատրելու համար պատվաստումների իրավիճակի վերաբերող ճշգրիտ տեղեկություն, պատվաստումների գնահատականներ և հետագա պատվաստումների առաջադրված գրաֆիկը, տեղեկությունները կուղարկվեն Michigan Care Improvement Registry (Միչիգանի խնամքի բարելավման գրանցման կենտրոն): Անհատներն իրավունք ունեն պահանջելու իրենց բժշկական խնամք ապահովողից, որպեսզի պատվաստումների տեղեկությունները գրանցման կենտրոն չուղարկվեն:

DCH-0577A

AUTH: P. H. S., Act 42, Sect. 2126.